ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 08.10.2025թ. հ. 230-2025թ. տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակներում վարչության կողմից «Գնումների մասին» օրենքի համաձայն՝ հայտարարվող մրցույթի արդյունքներով իրականացվում է պահպանապատերի հարդարման և ներկման ծառայությունների մատուցում, որը չի ներառում վնասված պահպանապատերի վերականգնման աշխատանքներ: Նշված ծառայության մատուցումը ներկայումս ընթացքի մեջ է և հայտարարված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կազմակերպության կողմից Իսակովի և Մյասնիկյան պողոտաներում իրականացվում է հարդարման և ներկման աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ